## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 75

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքով, "Քաղաքաշինության մասին" ՀՀ օրենքով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 29/04/2021 թ-ի թիվ 698-Ն հրամանով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար Լերմոնտովո համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-043-0015-0061 ծածկագրի տակ գտնվող 0.06433հա "բնակավայրերի" նպատակային նշանակության հողամասի նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և այն ՀՀ կառավարության 14/04/2004 թ-ի թիվ 457 որոշմամբ սխալմամբ փոխանցված չէ համայնքին, ուստի առաջնորդվելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կոմիտեի նախագահի 698-Ն հրամանով նշված հողամասի նկատմամբ ճանաչել Լերմոնտովո համայնքի սեփականության իրավունքը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 76

## ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ կետով , 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2022 թ-ի բյուջեի բ.10 խ.4 դ.1 հոդված 4729-ից համայնքի նշված բնակիչներին ցուցաբերել դրամական օգնություն 10000 /տասը հազար/ դրամի չափով՝ նորածին երեխայի խնամքի համար.

1.Շուբինա Աննա Յուրիի

2.Չիչյով Իվան Պետրովիչ

3.Մակշանով Պավել Վիկտորովիչ

Ընդամենը՝ 30000/երեսուն հազար/ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ